ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
«28» փետրվարի 2020 թ-ին կնքված N «ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/2-1»
Պետության կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան «27» հունվարի 2021թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ՋիէՆՍի-Ալֆա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Ֆարամազյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), որը գործում է Կանոնադրության հիման վրա, բոլորը միասին՝ կողմեր հիմք ընդունելով «ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/2-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով, որ 2021թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել է 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել ֆինանսական պարտավորությունները և վճարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2021թ-ի հունվարի 01-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021թ-ի դեկտեմբերի 31-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրն հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024065 ՀԿՀՀ 02505554	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ ք. Աբովյան, Խաղաղության 1 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 19300-11980040100 ՀԿՀՀ 00096001	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին, ք. Երևան, Կոմիտասի 49/2 ՀԿՀՀ 00454227
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«28» փետրվարի 2020թ. կնքված
ՎԱ-ՍԱՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի
« 24 » հունվարի 2021թ. կնքված N 2 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211100/2	հանրային հեռախոսային ծառայություններ	70 000	70 000	70 000	157 500	157 500	157 500	245 000	245 000	245 000	350 000	350 000	350 000	**350 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024065
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300-11980040100
ՀՎՀՀ 00096001

(ստորագրություն)

Կ.Տ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ

Սննդամթերքի անվտանգության
տեսչական մարմին,
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՎՀՀ 00454227

(ստորագրություն)

Կ.Տ.